



ՀԻՆ ՀԱՒԱՏՔ



ԳԼ. Ը. - ԴԻԻՑԱԶՈՒՆՔ

(Տես յէջ 481)

Մատուոյ քաղափարն որ հասարակ է ամեն մարդկան, ըլլայ կիրթ ըլլայ անկիրթ, չէր կրնար ի սկզբան՝ մէկէն աւելի ըլլալ. բայց տգէտ, մօլի եւ վատ մարդիկ՝ տեսնելով եւ լսելով իրենց բնութենակից քաջ, մեծագործ (եւ կարծեցեալ) հրաշագործ անձինք, իրենցմէ գերազոյն էակի փոխուած համարեցան, մա՜նաւանդ յետ անոնց մահուան կամ աներեւոյթ ըլլալուն, եւ աստուածային զօրութեանց հաղորդ, յետոյ նա եւ աստուածացեալ. մինչեւ անմտութեամբ համարձակեցան աստուած կամ զիր կոչել եւ պաշտել: Բայց քանի որ այս գերազոյն աստիճանի չէին բարձրացուցեր այնպիսի անձինքը, միայն աստուածազան իմանալնային կամ պարզապէս Վեհ եւ Դիւցազն կոչէին. որ է ըսել կամ աստուածոց նման կամ (յետ ընդունելոյ դաստուածս) անոնցմէ յառաջ եկած, զոյացած, ծնած, եւ այլն. եւ թէպէտ Դիւցազն անունն ի զից ծագեալ է, բայց անոր գերազանց կամ վեհ ըլլալուն գաղափարն, կարծիքն եւ պաշտօնն յառաջ է քան զԴիւս կամ շաստուածս. վասն այսորիկ մենք այլ նախադասեմք ի գրուածիս, ինչպէս քան զաստնք այլ նախադասեցինք աւելի ցած

եւ խառն էակներ. վասն զի հակառակ համեմատութեամբ կ'երեւի մեզ աստուածակա՜նութեան եւ պաշտելութեան հաւաստքն. այսինքն, յետ միոյն Աստուծոյ վերազոյն քաղափարին, յետոյ աստիճանաբար վարէն զէպի վեր, կամ ի ցածագոյն վիճակէ անձինք վեհ համարուած են, ապա լաւագոյնք՝ աւելի վերագոյն համարեալ, եւ մինչեւ յաստուածութեան աստիճանն: Ըստ այսմ ունտի համարման՝ ոմանք կոչուած են մեծ ոմանք փոքր աստուած, ոմանք կիսաստուած, ոմանք յաստուածոց սերեալ՝ բայց իբրեւ հասարակ մարդ. ոմանք այլ նախ հասարակ մարդ ապա աստուածացեալ. եւ այս զանազան դասերով բազմացեալ՝ ըստ այլեայլ կրօնից ազգաց. ինչպէս յայտ է ի դիցաբանութեան նոցա, մա՜նաւանդ Յունաց, Լատինաց, Եգիպտացոց եւ Հնդկաց. որոց շատուածներէն աւելի հետաքննելի կրնան ըսուիլ Դիւցազուներն, վասն զի մարդիկեղէն եւ պատմական սկիզբն ունին, թէ եւ շատ կամ քիչ առասպելեալ: — Մեր քննելիքն այլ նկատմամբ մեր ազգին՝ այս է, թէ եւ շատ աղքատ է յայսմ մասին մեր դիցաբանութիւնն, եւ երանի՜ թէ իբրց այնպէս եղած ըլլար, եւ ոչ ի մոռացութենէ: Այլ, մեր

պատմութեան մէջ յիշուած սակաւ Դիւցալ-
զունքն (զոր աւելի վեհագունք կոչել պատ-
շաճ էր) հետեւեալքն են, զանազան աստի-
ճանաւ, որոց մէջ և ծանօթ պատմական ան-
ձինք՝ բայց յիշատակաւ առասպելախառն,
ինչպէս արդէն յիշուած Երուանդն և Աւ-
տաւազդ, և այլն ։

Մեր պատմութեան, ստույգ կամ աւան-
դական՝ սկիզբն է ի Հայկայ, և ի ժամա-
նակէ աշտարակաշինութեան Բաբելոնի, և
ինքն է մեր առաջին վեհն. երբ բռնաւորն
Բել, ուսկից ասպտամբեր էր, իր վրայ կու
գար, իր թոռն (կազմով կամ կազմմա) փախ-
չելով կու փութայ գալու առ պապն և իրմէ
շուտաբայլ լրատու կու խարէ. կոչելով զնա՝
« Ո՛վ վեժդ դիւցազանց, դիմեալ զայ ի
» վերայ քո Բէլ, յաւերսիւք Քաջօք, և եր-
» կայնադիզօք հասակօք Սկայիչք միցողօք » ։
Այս վիպասանական բացատրութիւնք յայտնեն
Հայկայ գերագոյն քաջութիւնն ի մէջ Քա-
ջից, և առնց հակայակերպ մեծամեծ ան-
ձինք համարուիլն. որպիսիք էին ոչ միայն
Բելի հետ եկողքն, այլ ինչպէս կրկնէ պատ-
միչն՝ կային այնպիսիք « յերկոցունց կող-
» մանց սկայիցն, արք յաղթանդամք » ։
որոց հասակն՝ զարերով անելով (յերեւակա-
յութեան), յետին պատմիչք տասնեակ կան-
գուններով բարձրացնեն զՀայկն և այլ ա-
ւելի զԲէլ. որ սակայն հանդիմէ իրեն ա-
մեն երկաթի և պղնձի զլխանոցով և զրահ-
ներով՝ չի կրնար ազատիլ Հայկայ լայնալիճ
և պնդաբարդ աղեղան երեքթեւեան նետէն.
որ անոր պղնձապատ կուրծքէն և կռնքէն շեշ-
տակի կ'անցնի, և « այսպէս ճոխացեալն Տի-
» տանեան՝ կործանի, յերկիր զարկուցեալ
» և փչէ զօդին » ։ Այսպիսի քաջութեան և
ուժոյ գործ ընդդէմ հարկ էր որ ըլլայ Մեծն
դիւցազանց ի Հայս, և արժանի այն ամե-
նայն պատուոյ և հաւատոց՝ զոր քանի մի
տեղ յիշեցինք (289—91) և երկնից պարզ
երևիսի ամենէն պայծառ աստեղ մէջ տեսանք,
ոչ միայն իր նախաքրիստոսեան սերնդոց աշ-
քով, այլ և սրբափայլ Թարգմանչաց աշօք և
ղլօք, որով գերազանցեալ կրնանք ըսել մեր
նախնայրն և վերջ՝ քան զամենայն դիւ-
ցազունս օտարաց, որոց անուանքն պիտուած

են նոյն երկնից աստղականաւ մագաղաթին
վրայ, բայց ոչ նմանապէս մեծ և զովանի
յիշատակօք. վասն որոյ շատ լաւ յանդիման
են մերայինք՝ գոցել այն տեղ Որիննի դէմ-
քը, և « բանալ զպատրուակ Հայկին »
(եր. 289—91). նոյնպէս և անոնք՝ որ Հրատ
մուրակի և իր օրինակած Արէս շատուածոյ
տեղ՝ Հայկն կոչեր են. որոց մին թուի
Մխիթար Անեցի ի Թարգմանութեան աս-
տղագիտական բանից. Այս հատին դրու-
թեամբ (Հրատ—Արէս—Հայկն) հարկաւ մեծ և
անաւոր դիւցազոյ կարծուէք. անոր համար
կ'ըսէ ուրիշ ժամանակակից Մխիթար մ'այլ
(Գաշ), « Ոմանք (յաստեղաց) ժանտական են,
որպէս Հայկդ, և այլք բարիք » ։ ուրիշներ
այլ գրեն, թէ ով Հայկայ աստեղատան տակ
ծնանի՝ երկաթով մեռանի ։ Յիշեցինք որ ո-
մանք այլ կշիռ համաստեղութեան ընծայեն
զՀայկ, կամ նոյն համարին զՇամփուրս Հայ-
կին (երես 289) ։ Յայտնաւորք այլ յիշեն
հոկտեմբերի 21էն « Երեւեալ նշան յերկինս,
հուր ի վրայ եօթն աստեղաց Հայկինն » ։ որոյ
փոխան ուրիշ Յայտնաւորք Բագմաստեղ կ'ը-
սեն ։ Յիշած եմք եւս Հայկայ և Որիննի նը-
մանութիւնքը, ոչ միայն պայծառութեամբ կամ
գերեցելութեամբ, այլ և մէկուն որսորդու-
թեամբ, միևնոյն աղեղնաւորութեամբ ։ — Ա-
նոցմով վեր ձիւք մ'այլ ընծայեն մերայինք
իրենք՝ նախահօր, իբր առաջին տօմարական
կարգադրի, արեգակային տարւոյ ամսոց բա-
ժանմամբ, և շարժական ու անշարժ տարի-
ներու միաբանութեամբ, որ օտարաց մէջ
Ենկան՝ իսկ մերոց՝ Շրջան Հայկին կոչուի,
որոյ վրայօք այլ՝ ուրիշ գրոց մէջ տեղեկու-
թիւն տրուած է ։

Այսպիսի մէկ մ'ըլլալով Հայկն՝ կրնար
յուսացուիլ որ օտար ազգի մէջ այլ մերձաւոր
յիշատակ մ'ունենայ. չեմք յիշեր զվիրս,
որոց պատմութեան սկիզբն այլ նոյն և նման
է մերոյս. այլ մեր արեւմտեան զբացի և
ցեղակից համարեալ Փոխազ (248) մէկ
դիւցազն, գրեթէ համանուն՝ Հայակն, Hy-
gnis գրեալ ի Լատինն, Ύαγνις ի Յունաց,
(նյոր Մարտիասայ սրընդահարի, որ Սատիւ-
րաց դասէն համարուի (տ. 433). ինքն այլ
հնարող երկթել և եռաթել քնարաց ։ Եթէ

նոյն մեր նահապետն համարուի, Հայկայ ձիբը մ'այլ կ'աւելնայ, Երատշտականն, աստեղագիտականն հետ. բայց իրեն ամենէն մեծ ձիբըն՝ ուսոյ և քաղութեան մեծութիւնն էր. որոյ համար գրեթէ մեծ և հոկայ բտել և Հայկ՝ հաւասար համարուէր. Փիլոնի գրոց թարգմանիչն՝ հակայց Վիթիարի մեծութիւնը բացատրէ՝ Հայկալափ ըսելով. Ազաթանգեւ լոսի թարգմանիչն՝ Տրդատայ՝ Մասիս լեռնէն մեծամեծ քարեր շալկել բերելը՝ Հայկաբար կ'ըսէ. Աթրուսին (Թուլմաս պատմի) իր ցեղին գովանի իշխանը՝ Հայկապիտո կոչէ. Բայց այս ամենէն զարմանալին Գր. Նարեկացի (որ ինքնին զարմանալի իսկատիպ անձ մի է և պաշտելի Սուրբ), Ամենասուրբ Աստուածածնի գեղեցկութիւնն այլ՝ համարձակի ըսելով՝ Հայկանմանն. — Դիւցազանց կամ վեհազանց պէտք չէ հաւատալ կամ նմանիլ. բայց եթէ ուզէ մէկն՝ կարծեմ չի կրնար գտնել լաւագոյն քան զՀայկին:

Ակնարկ մ'այլ ձգելով զինքը Մեծազոյն դիւցազանց կոչող թուան, միայն այսոր անունն է ի հին պատմութեան մերում՝ որ յունակերպ աս վերջնայ, Կադմոս, և համարիմ Կադմո կամ Կադամ. ինչպէս, Թորգոմ, Արգամ, Արշամ, և այլն. նշանական է որ այս յոյն կամ փիւնիկ վեհական՝ կողուի որդի Ագէնորի (Արհիւր, որ շատ ուսով և քաջ նշանակէ), յորում հեռունց Հայկին անուն լսուի. Խազիրը այլ ըստ իրենց աւանդութեան՝ Թորգոմայ անդրանիկը (ըստ մեզ Հայկին) Արհիւր անուանէին. Կադմոսի կինն այլ Արմոնիա կոչուէր, մէկ տառիւ (Ո-տ) միայն տարբերեալ յԱրմենիայ. — Դարձեալ, ըստ առասպելաց Թունաց, Արամազդայ մատուական՝ Կեղեցիկ պատանին Գանիւմեզէն՝ կոչուէր և Կադամ, զոր յետոյ այն խալտաւակ հայրն աստուածոց (Արամազդ) փոխարեկց ի Զրոտ համաստեղութիւն կամ կենդանակերպ: Ըստ գիպաց իմն, և ոչ հաւաստեաց, բեւեռագորոց կարգացողք ոմանք Այս անուն մ'այլ գտած՝ կարծեն (մօտ Հայ անուան), և համարուած շատուածոց մատուական՝ նման Կադամի, կամ օրոյ գուշակութեանց: Զինք իրենց հնագոյն և ջրհեղեղեան Նահապետը ԵՅՕ կոչին. — Այս

պիսի առասպելախառն ծանօթութեանց մէջ՝ յուսամք որ ներքի ըլլան մեր զարոուղութիւնն այլ, թէ այս թէ յետագայը:

Տեսանք, և արդէն ամենքն զիտէին, որ մեր ազգի նախահայրն և անուանատուն՝ Հայկն է, ինչպէս խորենացիէն սկսեալ ամենայն պատմիչք աւանդեն. սակայն հնագոյն և առաջին Հայ և հայագիր պատմիչ մեր Կերին՝ ի սկիզբն պատմութեանն՝ փոխանակ Հայոց՝ Աւքանագեան ազգ կոչէ, (ըստ աւանդութեան) յանուն նոյն Հայկայ պապուն կամ հօրեղորք և Յաբեթի թոռան. որով՝ յառաջ քան զՀայկն՝ օտ երեւի բնակեալ յերկրին՝ որ յետոյ կոչուի Հայաստան, ոսկից կ'երթայ ի Փոնգիւս. և այսպէս երկու ազգացս այլ (Հայոց և Փոնգիւս) նախահայր կամ արմատ կ'ըլլայ. Ս. գրոց մեկնիչք այլ ի Փոնգիւս բնակեալ համարին զԱրքանազ, թէպէտ եղած են (ինչպէս Հրեայք) որ ինչուան Գերմանացոց նախահայր համարին զնա. Մեր Ս. գրոց թարգմանութեան մէջ այլ ծանօթ է Երեմիայ մարգարէին՝ շատ անգամ յիշուած հրաւերն (Երմ., 27), ի վերայ Բաբելոնի գալու՝ աստուածային վրէժնորութեամբ. « Պատուէր տուք յինէն Արարատեան զըն. » զին և Արքանազեան թագաւորութեան. » ջրն » Ինչ այլ կարծեն և զրեն թարգմանք և մեկնիչք՝ այս երկու անուանք կամ ասոնց փոխանակը՝ իրարմէ չեն զատուիր, ինչպէս զարձեալ Արարատն այլ Հայկական իմաստէն. բայց ասկէց մեր հիմայ հետեցընելին է Արքանազայ այլ Վեհազանց կարգի մտնելն, թէ և այս յայտնապէս յիշուած չէ. միայն ծանօթ է փոխակական կամ հայկական գլխանոցաւ Լուսնի շատուած մի Արքիմոս կոչուած. Լուսնի մանկին վրայ մարգոյ կերպարանք մի ինչուան ի կէս մէջը. (տես երես 102): Ոմանք այս անունն մեկնեն յունական *Ασκηνοζ բառով՝ իբր անհաստատ, անգագար շարժող Լուսին, բայց աւելի զխնականք՝ անձնատր վեհազն մի համարին. Հրմեբոս և Վիրգիլիոս այլ այդ անուամբ փոխազցի իշխաններ և զօրավարներ յիշեն, ինչպէս և Փոնգիւրոյ մի մասն այլ Ասկանիոս կոչեն, որ Ս. Գրոց յիշած Արքանագեան երկրին լաւ յարմարի:

Արքանազէն այլ լեր ելնելով՝ կ'արժէր ա-
նոր պապը՝ մեծ աղգապետն Յարքը՝ Դիւ-
ցազանց կարգի մէջ նախադասել, ինչպէս
աւանդէին Քաղղէացիք, ըստ Խորենացոյ,
այնոր երկու եղբայր հետ, անուանքք փոխե-
լով ի Զրուան, Տիտան և Յապետ, ինչպէս
և Յոյնք և Լատինք կոչեն զառ, Japet և
ճանչնան որդի Ուրանոսի (Երկնից), և ըստ
ունանց Թազաւոր Թեոսալացոց և նահապետ
հելլենական ազգաց։ Ասոնց մատենագիրք
աւանդեն՝ որ ի Թեոսալիոյ եկած ըլլայ Յա-
սոն ոմն՝ նահապետ Հայոց, զոր՝ Թերեւս լա-
ւազոյն կ'ըլլար ի Հայոց ի Թեոսալիա դըր-
կեն։ Բազմամոտ գերմանացի հեղինակ մի
(Պուտեն) Յոյնք ի Ս. Գրոց և ի Հայոց առեր
են, կ'ըսէ, զՅապետ, և իրեն կին ընծայեր
են զԿիրքիւն կամ զԱսիա։ Մեր մնացեալ
տառ մէջ չկայ յիշատակ մի Յարքի զպաշ-
տոման, բայց զի իր եղբարքն՝ մեր գրոցեաց
մէջ, և քոյրն՝ Աստղիկ՝ պաշտուէր ի Հայս,
զժուար է Թէ ինքն այլ պատուած չըլլայ։ —
Աւելի զարմանք է որ Հայկայ հայր համա-
րեալ Թորգոմայ պաշտօն կամ յիշատակ չկայ
կամ չէ հասեր մեզ՝ ի կրօնս Հայոց. ապա
Թորգոմայ զայն Թուրքմանաց։

Հայկայ սերնդոց մէջ ամենէն ծանօթ
գիւցազն կամ առասպելեալն է Արայ, զոր
արդէն յիշեցինք Աւելի առասպելաւ, և յետ
Հայկայ և Արամայ գործոց՝ այսոր յիշատակն
է նշանաւոր ի պատմութեան ազգին, մանա-
ւանդ հռչակաւոր Շամիրամայ եւն ունեցած
յարաբերութեամբն, ըստ վիպասանից։ Որ
ատեն և ինչ կերպով այլ եղած կամ կար-
ծուած ըլլայ Արայի գլխաւոր դիպուածն,
(մահն և յետ մահուան), հարկ է որ այնքան
առասպելաց մէջ ստոյգ կէտ մ'ունենայ,
կամ շատ մեծ և տարածեալ համբաւ, զոր՝
մինչեւ ծանրագլուխ Պղատոնն այլ ընդունի,
և իր Հասարակապետութեան Ժ գրոց մէջ
նշանակէ, և ուրիշներն այլ իրմէ առնուն,
ինչպէս Կղեմէս Աղեքսանդրացին։ Բայց յայտ
է որ Յոյնք առանց փոփոխութեան չէին կրը-
նար ընդունիլ և աւանդել օտար բան մի։
Եւ ըստ այսմ Արայն կ'ըլլայ ոչ մայն Էր՝
այլ և Ալիփառս, իբրեւ քաջ և կորովի (δύαμις),
ինչպէս հայ բառն այլ այր՝ զնայն նշանակէ։

տեղեալ կամ ազգաւ այլ Պամփիլիացի կ'ը-
սեն, շփոթելով ուրիշի հետ. միաբանին պա-
տերազմի մէջ սպանուած ըսելով, և տասն
օր մարմինն անասական մնալով փոխադրուած
իր ընտանեաց քով. մինչ երկու օրէն լերջ
կու տանին յուղարկաւորելու՝ այրելով, կ'ող-
ջըննայ և կու պատմէ ինչ որ հանդերձեալ
աշխարհի դժոխոց և արքայութեան մէջ տե-
սեր է ինքն, կամ Պղատոն երեւակայեր է.
Կղեմ. Աղեք. Թէպէտ ի Պղատոնէ կ'առնու-
բայց Արմենիոսի որդի կոչէ զԷր Պամփիլա-
սեան, և շփոթէ ուրիշ Պամփիլացի Զրա-
ղաշտ Հայու մի հետ, որ Կիւրոսի բարեկամ
էր և զրեց, կ'ըսէ, իր պատահարք։ Առնու-
րիտ այլ (ընդդէմ Հերձուածոց, Ա) ի Կտե-
սեայ հին պատմչէ կ'առնու այս աւանդու-
թիւնը, և Զրաղաշտի կամ Զոստրիանոս
Թոն կ'անուանէ զԱրմենիոս՝ Զրաղաշտ
կամ նման անուամբ մեզ մի յիշուի Կիւրոսի
ատեն, կամ նոյն կամ տարբեր ի հռչակա-
ւոր աղանդապետէն, որ Թերեւս մեր նահա-
պետաց մէջ Ար—մեզ կոչուած է և անուամբն
շփոթուած ընդ Արայի, Ժամանակաւ ալ քիչ
առաջ կամ լերջ քան զԿիւրոս և զՏիգրանս՝

Անուշաւան, որդի Արայի՝ հօրը գիւցազ-
նութեան շնորհք մի ունի. ի մանկութեան
« ձօնեալ էր ի Սօսիսն Արամեակայ՝ որ
յԱրմաւիր » որոյ համար և Սօսանոսէր կամ
Սօս անուանէր. և մեծնալով եղաւ « Շատա-
հանձար յիր և ի բան »։ Հետեանց կամ մե-
տանց՝ Ապոլոնի շշորդ մի երեւի յԱնուշա-
ւան, նուիրումբն ի ծառաստանս՝ և հանա-
րեղ բանահիսուութեամբ, հաւանօրէն երգա-
հանութեամբ. Ապոլոն այլ Սօսիսն կամ
Սօսեան կոչուէր (ինչ պատմառաւ. — չեն
զիտէր զգիւցազնը.) որոյ եղեւնափայտեայ
պատկերը գտնելով երբեմն ի Սելեւկիա՝ տա-
րին ի Հռովմ։ Հնգկային հին ձայն մ'այլ
լսեցընէ Անուշաւան անունն։

Յետապայ Հայկադանց մէջ Թէ և կան
Դիւցազնական անուանք, ինչպէս Ասնակ և

1 Et ille conveniet, cuius Ctesias gestas
Historiarum exponit in Primo, Armenius Zo-
striani nepos et familiaris Pampilius Cyri.

Փաստակ, բայց չեն յիշուիր առ մեզ դիւ-
ցազնացեալք. և ոչ ինքն Տիգրան աշակից
կիրորսի, ի վիպասանից ազգին հռչակեալ և
սիրելի քան զամենքն, բայց եթէ ի տես-
լեան Սթղանակայ (Խորեն. Ա.). իսկ իր
որդին կամ Թոռն Վառազն, գերազանցեալ
քան զԴիւցազունս, վասն որոյ և յիշուելու
է շատուածոց հետ : — Իսկ Արշակունեաց
ժամանակ՝ անոնց նահապետ Վաղարշակայ
համար կ'ըսուի որ իր նախնեաց անդրինները
Հայոց մեհենաց մէջ մտուց և պաշտելի բրաւ-
իր որդիքն և Թոռուքը (Արշակ Ա և Արտա-
շէս Ա) այնքան արիակաւ գործեր բրին՝ որ
Դիւցազանց կրճային մօտենալ. յետնոյս որ-
դւոյ աշխարհակալ Տիգրանին արեւուն այլ
կ'երդնուին ի կենդանութեանն, բայց Հոռվ-

մայեցիք խաւարեցուցին զայն : Ասոնցմէ զար-
մի կամ՝ երկու վերջը՝ Բ Արտաշատցոյ և
Երոտանդայ վրայօք կարծուածն և ըսուածն
արդէն յիշեցիք (եր. 35). ասոնց ժամա-
նակակից և զործակից մեծ սպարապետն
Սմբատ բազրատունի՝ Այրաքաջ կոչուելով ի
վիպասանից, (զուցէ և յեգորթն Արտաշա-
դայ՝ բանաստեղծ Վրդէ) անտարակոյս է որ
ի դիւցազնութիւն վերառեալ է : Եւ որովհետեւ
նաստեղծութեան և երաժշտութեան՝ այս-
պիսեաց անուանք և յիշատակք՝ Թափանցե-
լով և ընդ քրիստոնէական վարադոյր, նա և
յետ ամենայն ջանից Լուսաւորի և Տրդա-
տայ, ըսուէին և ի Դ գարու ի Փոստոսէ
Բաւզանդայ, և ի Եին ի Թորենացոյ :

(Շարայարեչի)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՆՏՐԻ

(Տես յ'էջ 491)

Բժիշկ Բաբայեվի հանդիպումն. — Ժամանումն յԱզոյիս. քաղքին տեսքը, բնակիչքը.
Ազոյեաց մեծաստեղծը. — Մեզի ի պատիս կատարուած հանդիս. — Սրենոս խաւարում :

14 յունիս. Թէպէտեւ մասնաւոր
կերպով մը համակրութիւն կը ըզ-
գանք Օրդուբատ քաղաքի, ուր այն-
չափ լաւ ընդունելութիւն գտանք, և
ամուսինս կարող եղաւ հետաքննական
ամորդարանական գիտողութիւններ ը-
նել, սակայն որոյեցի՞նք ճամբայ ելլել :
Քաղաքէն մեկնելու ատեննիս հանդի-
պեցանք բժիշկ Բաբայեվի Տիգրանե-
ւոյ որ կրմանշահէն կը գառնար : Ի-
մաստուն բժիշկը՝ ուսման ընթացքը
կատարած է ի Փարիզ, և ամուսնոյս
աշակերտակից ըլլալով մի և նոյն վար-
ժարանի մէջ, մէկէն ծանօթ և բարե-
կամ եղան իրարու :

Պարսկաստան զրկուած էր Բաբայեվ
ուսումնասիրելու և հետազօտելու թէ
ուստի՝ կու գայ յԵւրոպա մաղձախտը
կամ քոլէրա, և անոր ընթացքը գի-
տելու : Հիւանդութեան հետքը թէպէտ
տեղ մըն ալ գտած չէր, որովհետեւ
ձմեռ ատեն ճանապարհորդած էր,
բայց ամենուրեք այնպիսի աղտեղու-
թիւն և ողջպահիկ հնարից և միջո-
ցաց անհոգութիւն տեսեր է, որ ա-
մառուան եղանակիս համաճարակին
երեւումը անկարելի չի համարիր :
Իր նպատակն եղած է դարձեալ զգու-
շացընել ժողովուրդը այս հարուածէն,
վախընելով և բռնադատելով որ